ազգ մը են, այս խռովութեան մէջ ևս միութիւնը անհրաժեշտ համարելով, մրգավաճառներից խումբ մը կազմեցին, և տեղի ունեցած կռիւը սաստկացնելով, յարձակում արին արդարութիւնը պաշտպանող դրացեաց վրա։ Այդ միջոցին շուկայի մէջ գնուող անձանց մեծամասնութիւնը ստիպուեցան իրենց խանութները փակել և բացակայ գտնուել այդ բարբարոսական խռովութիւնից, քանզի այս պարագային խանութների կողոպտումն ալ անապահովութեան տակ էր։ Այս լուրը անմիջապէս տեղական պօլիցիային իմաց տալով, մսքառող անձինքները մի երկու ժամ բանտարկվեցան... քանզի ձերբակալները պարսիկ էին։

Պարսիկների կիրքը կերևի թէ դեռ չէր յագեցած՝ նշանաւոր պարսիկ ումն հրապարակաւ պարսից կը քաջալերէ ըսելով, գոնէ մի քանի հայ սպանէ՛ք, այդ մասին ես կը լինէի պատասխանատու։

Յաջորդ առաւօտը սկսան տասնի չափ հայ մրգավաճառներ բանտարկել, իբր թէ սորանք պարսից կրօնի հայհոյած և որով մեծ պատժի արժանի եղած լինեն։

Հայք տեսնելով, որ պրիստաւը աչառութեամբ նշանակեալ հայոց առանց քննութեան բանտարկեց, մեծ մասը իրենց խանութները գոցելով, գուբերնաթօրին տան գաւիթը հաւաքվեցան, խնդրելով տեղեկանալ թէ այն հայոց, որ բանտարկելու հրամայած էր պրիստաւը, արդեօք ինչ աստիճանի մեղաւոր գտած է վնոսա. քանզի՝ կռիւը տեղի է ունեցեր պարսից և հայոց մէջ։

Գուբերնատորը կը պատասխանէ, ըսելով, որ այդ մասին մի աղերսագիր ներկայացնեն, որպէս զի, ըստ օրինի գործադրուի. հայք գուբերնաթօրին հրամանին հնազանդեցան և աղերսագիրը պատրաստեցին, բայց դեռ չէ տրուած, քանզի շատ մը հայերի ստորագրութեամբ տալ կուզեն, յուսալով, որ տեղական կառավարութիւնը այս մասի ուշադրութիւնը դարձնելու չը ձանձրանար. եթէ լուռ մնան ամեն մի օր այսպիսի կռիւներ տեղի կունենան պարսից և հայոց մէջ։

Ց. Մ. Տ.

ՆԱՄԱԿ ՇԱՄԱԽՈՒՑ

—

23 յուլիսի

Ամեն ճշմարիտ ազգասէր և ազնւամիտ հայ սրբազան պարտք պիտի համարի իրան համար հետեւելով բարեկիրթ ազգերին, աշխատել հեռացնել ամեն կրօնական բանակռիւներ, այդ և պահանջում է մեր ներկայ լուսաւորեալ դարը, որը քարոզում է կրօնի և խղճի ազատութիւն, բայց դժբաղդաբար մենք՝ հայերս, տակաւին զարգացած չենք այն աստիճան, որ հասկանանք սրա վսեմ նշանակութիւնը և հէնց դրա համար է որ «Մշակը» միշտ պատերազմում է կրօնամոլութեան դէմ և իբր վարձ իրան քրտնաջան աշխատութեան ստանում է նա ատելութիւն և հալածանք և այն ում կողմից, պատուելի ընթերցողներ, մի ազգային լրագրից, որը պիտի լինի ժողովրդին դէպի լուսաւորութիւն առաջնորդող, բայց նա այսօր ազգի օգուտը զոհում է իրան հաճոյքին և կրքերին։ Մենք գոնէ, այսպիսի լրագրութիւնը կը համարենք իբրև թշնամի ազգին և յուսով ենք, որ ամեն մի բարեկիրթ հայ, հասկանալով նրա վնասը, կը մերժէ այդպիսի լրագրի սուտ քարոզութիւնը։ Այո, նրա այդպիսի քարոզութեան հետևանքն տեսնում ենք մենք այժմ Բագուում և Շամախում, որոնց հասարակութիւնը չէ այն աստիճան զարգացած, որ կարողանայ իրան խելք ու բանականութիւնով դատողութիւն անել մի այդպիսի ամենակարևոր առարկայի վրա, այլ իբրև տակաւին միամիտ աշակերտներ, կրկնում են իրանց ուսուցչաց ասածները, առանց նորանց օգուտը և վնասը հասկանալու։ Եւ ով պիտի լինի մի այդպիսի միամիտների պատասխանատուն, եթէ ոչ մեր ազգային լրագիրները, որոնց մէջ այժմ երևում է այնպիսին, որը ժողովրդի խաւարում և տգիտութիւնում մնալը աւել է դասում, քան թէ լոյսը և արդարութիւնը։ Նա չէ կամենում խոստովանել, թէ լուսաւորութեան միջոցով միայն հնար է միմեանցից բաժանված, իրար հետ թշնամացած ազգային անդամներին կապակցելու և մի ազգային ամբողջութիւն կազմելու։ Բայց մինչ մի այդպիսի լուսաւոր դարում ինքը ժողովուրդը պիտի անտարբեր մնայ և ամեն մի վերանորոգութիւն ձգի լրագիրների վրա։

Թող մեր հասարակութիւնները հասկանան, որ իրանք պիտի լինեն իրանց դաստիարակիչքը, իրանք պիտի լինեն իրանց համար ուսուցիչ և աշակերտ, չը հետևել ամեն մի մարդու խորհրդին, ի նկատի ունենալով որ կան և կորստաբեր խորհուրդներ։

Ի՞նչ են մտածում մեր եղբայրակիցները, մինչև երբ պիտի լինենք մենք խաղալիկ մեր թշնամական ախոերին, անտես անելով լուսաւորութեան պահանջները։ Մինչև երբ պիտի մեր փտած զէնքերին ապաւինելով, ասպարէզ մտած, ոտնակոխ անենք լուսաւոր դարուս արտօնութիւնները և երկար ու ձիգ կրօնական վիճմունքները բանանք։ Միթէ մենք չենք զաւակներ մի այրիացեալ ազգի և առաւել տասնևիններորդ դարուս։

Թողնենք այդպիսի մահաբեր մտածութիւններ և միաբան աշխատենք ազգի բարոյական վերանորոգման, իմանալով, որ մեր ազգի այժմեան դրութիւնը պահանջում է կարեկցութիւն ամեն մի հայի կողմից, թող նա լինի քրիստոնեայ և թէ անկրօն։

Բայց կայ մի բան, որ ամենագլխաւորն է, թէ աշխատութիւնը լոկ լեզուի դառումներով չէ, օլիմպիական բարձրութիւնից քարոզելովը չէ, թշնամութիւնը սերմանելով չէ, թշնամութիւնը չէ, այլ միաբան, անձնուրաց, և անխոնջ գործելն է։ Այսքանս թող բաւական լինի մեր հայ հասարակութեան իրան պարտաւորութիւններն իմանալու և աշխատելու։

Իմ ասածներիս գլխաւոր ուղղութիւնը դէպի մեր Շամախու հայ հասարակութիւնն է. թող միանանք թէ լուսաւորչականք և թէ աւետարանականք, մի կողմ դնելով ամեն թշնամութիւններ և մեղադրական զրպարտութիւններ։ Վերջացնելով նամակս, մենք՝ աւետարանական երիտասարդներս հրաւիրում ենք բոլոր տեղիս լուսաւորչական երիտասարդներին, միանալու մեզ հետ ամեն ազգային պարտաւորութիւններում, որոնց մէջ մենք հրապարակով յայտնում ենք մեր պատրաստականութիւնը։

Աւետարանական երիտասարդ

ՆԱՄԱԿ ՌՕՍՏՈՎԻՑ (ԴՕՆԻ ՎՐԱ)

—

Յուլիսի 11

Կաղաչեմ ձեզ տպագրել ձեր ազնիւ լրագրի մէջը Հայաստանի եղող սովատանջ եղբարց համար հաւաքված փողը Ռօստովի մէջ գտնվող ազգասէր եղբարցմէ։

Յարութիւն Նալչաճեան 5 ր., Միհրան Քիօմիւրճեան 2 ր , Ավետիս Իմացարեան 1 ր., Վասիլ Քուրեանքա 1 ր., Յովհաննէս Սեօհպեթեան 1 ր., Գէորք Պալապանեան 1 ր., Յակօբ Աւանքեան 1 ր., Ստեփան Արմաղանեան 1 ր., Միքայէլ Տէր-Յարութիւնեան 40 կ., Առաքել Սէֆէրեան 40 կ., Երեմ Տէր-Վարդանեան 50 կ., Համբարձում Յակոբեան 50 կ., Գրիգոր Աբրահամեան 1 ր., Պապա վարթիկուլեան 50 կ., Արգար Սարտարեան 50 կ., Աղեքսանդր Պապաեան 50 կ., Ոմանք 1 ր., Ստեփան մահտեսի Կոստանեան 1 ր., Յարութիւն Ղազարեան 1 ր., Տեվեթ Յունանովեան 1 ր., Գէորգ Այվազեան 53 կ., Երանոս Մկրտիչեան 60 կ., Յարութիւն Թարվերտեան 30 կ., Զաքարիա Ազիզեան 50 կ., Պապաճան Յովհաննէսեան 1 ր., Մկրտիչ Խուտավերդեան 1 ր., Մի ումն 1 ր., Յարութիւն Արմագեչեան 3 ր. Մանուկ Ջարիֆեան 1 ր., Յովհաննէս Վարթանեան 1 ր., Խաչատուր Հաջաճեան 1 ր., Նիկողայոս Հալաճեան 1 ր., Վրանձի Քուչարեան 30 կ., ումն Յովհաննէս 50 կ., Գէորգ և Յարութիւն Փոփովեան 3 ր., Եղիան Պապաեան 1 ր., Առաքել Շահրազեան 1 ր., Սանդուխտ Նալչաճեան 1 ր., Մարիամ Աստուածատուրեան 1 ր., Մարիամ Կատարինէ և Վ. Երքինեա Մաղաքեան 3 ր., գումարը 44 րուբլ, փոսթա ծախսը իմ վրա է։

Յակոբ Մաղաքեան

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

—

Թիֆլիս, 7 յունիսի

Ցանկանալով մասնակցել, մեր կարողութեան չափ, Վանայ սովատանջների օգնութեանը, ժողովեցինք մեր մէջ մենք, քիշմիշ ծախողներս, յոգուտ նրանց տասն և չորս րուբլ, որը ուղարկելով ձեզ, խոնարհաբար խնդրում ենք տնօրինէք հասցնել ուր հարկն է և, ի միամտութիւն նուիրատուների, տպագրել ձեր պատուական լրագրի մէջ նրանց անունները։

Ալեքսի 2 ր., Մովսէս 2 ր., Կարապետ 2 ր., Ե. Ջառափով 2 ր., Սինկայ 1 ր., Բ. Բէքուրով 1 ր., Տ. Խուդավերդով 1 ր., Գ. Էլիազով 1 ր., Մ. Ներսէսով 1 ր., Ս. Ջանղուլով 1 ր. Գումարը 14 ր.

Քիշմիշ ծախող Ալէքսի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Լսում ենք որ ԹԻՖԼԻՍԻ մի քանի երիտասարդ վաճառականներ և գործակատարներ ուղարկեցին Ներսէս պատրիարքին մի հեռագիր, որով շնորհաւորում են սրբազանին թէ նա ազատվեց թունաւորվելուց։

—

Մի օրիորդ, Եղիսաբէթ Յովհաննիսեան Տէր-Մովսիսեան, այս քանի օրերս եկել է ԹԻՖԼԻՍ Կիշնեվ քաղաքից, որտեղ աւարտած է իր ուսումը գիմնազիայում և կամենում է վարժուհի ընդունվել մեր մի որ և է օրիորդական հայոց դպրոցում և կամ մասնաւոր դասեր տալ տներում, գլխաւորապէս ռուսերէն լեզուից և թւաբանութիւնից, նոյնպէս գիմնազիական բոլոր առարկաներից օրիորդների համար։ Օրիորդը բնակվում է Ակիմովսկի փողոցում, Զգրաշէնի եկեղեցու մօտ, Կամսեվի տանը, № 10։

—

Երէկ, ուրբաթ օր «Մշակի» համարը չը կարողացանք դուրս բերել, ստիպված լինելով նորից հինգշաբթվայ համարի մի մասը տպել, որովհետև համարը վատ էր տպված տպարանում։

—

Մեզ պատմում են, որ մի քանի հայ-բողոքականներ ԹԻՖԼԻՍՈՒՄ իրանց թոյլ են տալիս ծաղրել հայ լուսաւորչական եկեղեցու այս և այլ ծիսակատարութիւնները։ Մեր կարծիքով ծաղրելը երբէք ոչինչ չէ ապացուցանում և աւելի կատաղեցնում է ամեն մարդուն։ Ինչպէս մենք միշտ քարոզում ենք հայ-լուսաւորչականներին չը հալածել հայ-բողոքական և հայ-կաթոլիկ եղբայրներին, այնպէս էլ այդ վերջիններին մի և նոյն խորհուրդ կը տանք։ Ամեն տգեղ, բթացնող, ստրկացնող, պատւի և հաւատի ազատութեան դէմ մեղանչող կողմերը, ամեն վիրաւորական, ճնշող, բռնի միջոցներ մեզ հաւասարապէս ատելի են, որ կողմից և յայտնվէին նրանք։

—

Մեզ հաղորդում են ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ որ Վաղարշապատի վիճակի և սրան կից Սուրմալուի գաւառի միրաւոյ պասրեդնիկները ծանուցագրերով յայտնել են բէգերի հողերի (աղալղ) վրա բնակվող հասարակութիւններին, որ եթէ կամենում են իրանց ձեռքում գտնվող հողերը գնել (ВЫКУПИТЬ) կարող են յայտարարութիւններով դիմել իրանց։ Արդէն զանազան գիւղերից շատ շինականներ յայտնել են իրանց ցանկութիւնը։ Ասում են, որ աղքատ հասարակութիւններին կառավարութիւնը խոստանում է օգնել հողերը գնելու մէջ։

—

ՎԱՂԱՐՇԱՊԱՏԻՑ մեզ գրում են։ «Մեր գաւառում ցորենը և գարին վաղուց է որ հնձել են և արդէն ծեծում են։ Գիւղացիները շատ գոհ են այս տարվայ բերքից։»

—

Պ. Ս. Մակարեան գրում է մեզ. «Ստանալով «Մշակի» 115 համարը, տեղեկանում եմ որ պ. Ա. Նալբանդեանց գրում է ձեզ Մոսկվայից, որ իբր թէ իմ Ս. Մ. ստորագրված «Շերամապահութեան մասին» յօդուածները թարգմանած են Իվէրսէնի ռուսերէն գրքից և յանդիմանում է ինձ որ չեմ յայտնած թէ ինչ աղբիւրից եմ քաղել յօդուածիս նիւթերը։ Ճշմարիտ է, այն յօդուածի մէջ շերամի հիւանդութիւնների նկարագրութիւնը և նրանց դէմ գործադրելի միջոցները, մասամբ էլ շերամի ընդ-

---

պատառոտած, մահուան տաժանելի տագնապից տանջվելով, առանց մնաս բարեաւի, առանց մի սրտակից բարեկամի, որը կարողանար նորա ձեռքը սեղմել, նորա աչքերը փակել։

Առաւօտից տ. Փերարը և Կրիստինան լսում էին այդ չարագուշակ որոտմունքները, ահ ու դողով նայում էին միմեանց և հալումաշ էին լինում։ Մայրը տանջվում էր իր որդիների համար, իսկ մանկահասակ աղջիկը իր եղբայրների և փեսացուի համար։

Նոքա միշտ լրաբերների հանդէպն էին գնում և կրկին յուսաբեկ սրտով յետ էին դառնում։ Ֆրանցը Նէյվիլերի գիւղաքաղաքն էր վազում և անորոշ լուրեր էր բերում։ Երբեմն Ֆրանսիացոց յաղթված լինելն էին ասում, երբեմն, թէ Մակ Մահօնը ջարդել է քառասուն հազար պրուսացիներին։

Յուսոյ և յուսահատութեան այդ փոփոխականութիւնը սաստկացնում էր նրանց ակնկալութեան տանջանքը։

Երեկոյեան 9 ժամն էր։ Դեռ ևս չը կար ոչ մի ճիշտ լուր. թէև չորս ժամ առաջ թնդանօթի որոտումն արդէն դադարել էր։ Կար մի յաղթութիւն և մի հարուած. բայց ումն էր յաղթութիւնը. ումն էր հարուածը։

Յաղթութիւնը արդէն յայտնի պէտք է լինէր։

Յանկարծ այն ճանապարհի վրա, որ տանում էր դէպի հովիտը, երևում են անհամար և անսանձ ձիաների վրա նստած տիւրկոսներ. յետոյ արագաթափ հեծելազօրքերը վազում էին Սավերնի ուղղութեամբ։ Յետոյ յանկարծ, կարծես, մարդկային մի խառնիճաղանճ խումբ արշաւում է նոյն կողմը։

Հրացանաձիգները, զուաւները, հեծելազօրները խառնափնթոր կերպիւ շտապում էին, միմեանց մղելով, այնպիսի մի անկարգութեան մէջ, որ նայողի վրա զարհուրանք էր բերում։

Սա փախուստ էր և սարսափելի փախուստ։

Զօրերի միջով անցնող այդ խառնաշփոթ ամբոխի կորուստը ահագին պէտք է լինէր։ Կարծես թէ, անսպասելի կոտորածը զարհուրանքի մէջ էր ձգել այժմ բոլոր փախստականներին։ Նոքա վազում էին անխօս և աչքերը դէպի ցած խոնարհած։ Նոքա չփոթութիւնից վայր էին ձգել իրանց սաղաւարտները, հրացանները, զրահները։

Հետևակները, ձիաւորների ետևից նստած, գրկել էին նրանց կծկվելով։

Յետոյ գալիս էին թնդանօթակիր սայլակները առանց թնդանօթների։ Նրանց հետևում էին ուրիշ սայլակներ, որոնց մէջ տարածված էին վիրաւորները, մեռնողները և ծանր քնի մէջ ընկղմված, յոգնած զինուորները։

Այդ տխրալի գնացքը տևեց ամբողջ գիշեր։

Ամբողջ գիշերը տ. Փերարը սպասեց, յուսալով, որ նրա որդիները տուն կը մտնեն, բայց իզուր. նոքա չեկան։

Նա հարցնում էր զինուորներին, որոնք անդադար մտնում էին խմելիք կամ ուտելիք խնդրելու. բայց ոչ մինը չը կարողացաւ նրան տեղեկութիւն տալ թէ ինչ եղան 3-րդ հեծելազօրները և սպաների գունդը։

Կրիստինան չէր վստահանում տեղեկանալ, թէ արդեօք Վիւրտեմբերգցիները մասնակցել են պատերազմին, թէ ոչ։ Այժմ նա ամաչում էր անգամ հարցնել Ֆրանսիային յաղթողներից—մի գերմանացիից։

Քանի որ գիշերը մօտենում էր, տ. Փերարի երեսը աւելի և աւելի գունաթափվում էր։ Նա չէր խօսում. նրա դաժան և անշարժ աչերը, կարծես թէ, նայում էին լեռների և մեծ անտառների միւս կողմը։

Ֆրանցը տեսնում էր մօր տանջանքները և ինքն էլ բաժանում էր նրանց։

Ֆրանսիան յաղթված, Ալզասը յափշտակված,—նա սարսափում էր հայրենասիրութեան տըրտունջից։

«Մայր, ասաց նա, երբ հայրենիքը դժբաղդութեան մէջ է, բոլոր ֆրանսիացիք պէտք է զէնք վերցնեն։ Եթէ կը թոյլ տաս, ես վաղը կերթամ պաշտպանելու մեր սիրելի Ալզասը իր յափշտակողներից»

—Լռիր, որդեակս, պատասխանեց մայրը վախեցած կերպով,—լռիր։ Ո՞վ արդեօք կը պաշտպանի մեզ, երբ դու այստեղ չը լինես։

Լուսաղէմին արիւնով և ցեխով թաթախված մի մարդ, մի զինուոր, յանկարծ ներս մտաւ, և նուաղումից մարելով վայր ընկաւ։

Տիկին Փերարը աղաղակեց։ Նա ճանաչեց հարիւրապետի սպասաւորին։

Նա վշտալի և աղերսալի հայեացքով յարձակվեցաւ նրա վրա։ Նա չէր համարձակվում նրանից հարց ու փորձ անել։

Զինուորը լուռ էր։

«Իմ որդիքս», բացականչեց նա վերջապէս։

Զինուորը խոնարհեցրեց աչքերը։

«Մեռա՞ւ», հարցրեց նա կերկերաձայն։

—Նա յանձնեց ինձ, պատասխանեց զինուորը, ձեզ իր վերջին բարևը բերել։

Նա կրկին խոնարհեցաւ դէպի վիրաւորեալը։

«Իսկ Կլօդը», արտասանեց նա դժուարութեամբ։

Նրան ես տեսայ ընկնելիս, շշնջաց թուլացած զինուորը։

Խեղճ մայրը մնաց փետացած։

Յետոյ վսեմութեամբ լի շարժուածքով դառնալով դէպի իր վերջին տղան՝ ասաց հաստատուն ձայնով.

«Ֆրանց, վաղը դու կերթաս պատերազմ»

(Կը շարունակվի)